

ԲԱՐԵԿԱՄ

Բարեկամներէն գրկուիր աւելի դառն ու ցաւալի է, քան՝ ունեցուածքէ գրկուիր, որովհետեւ ունեցուածքը թշնամիները կը շատցնէ ու իրեն ձեռք բերողի հանգիստը կը ցրուէ, իսկ բարեկամութիւնը թշնամիները կը նուազեցնէ ու բարեկամին հանգստութիւն կը նուիրէ:

Շահանխնդիր եւ կեղծաւոր բարեկամին յատուկ է իր բարեկամին ձախողութեան ժամանակ փախչողներուն մէջ առաջինը ըլլալ, եթէ ան անոր յաջողութեան ժամանակ կոչնականներուն մէջ առաջին հրաւիրեալն էր:

Ձախողութիւնը բարեկամութեան փորձաքար է, եւ ան որ որեւէ ձախողութեան մէջ չէ ինկած՝ կարող է կեղծ բարեկամը նշմարիտէն տարբերել:

Կեղծ բարեկամը յայտնի թշնամիէ աւելի չար է, որովհետեւ յատնի թշնամիներէն՝ մարդ վարժ է գգուշանայ, իսկ ծածուկ թշնամիներէն կասկած չունենալով՝ չարաչար կը վնասուի:

Ով որ բարի բարեկամ կ'ունենայ, կը գտնէ բոլոր բարիքները, իսկ ով որ չար բարեկամ կ'ունենայ կը կորսնցնէ ամէն բարիք: Նախընտրելի է առանց բարեկամի մնալ, քան չարի հետ ընկերանալ: Բարեկամ պէտք է ձեռք բերել մանաւանդ անոր համար, որ մէկու մը ունեցած բարին ամբողջական մնայ եւ չունեցածն ալ բարեկամի միջոցաւ ձեռք բերուի: Իսկ չար բարեկամը մէկուն ունեցած բարին կը խլէ իրմէ եւ անոր չունեցածն ալ բնաւ չի կրնար տալ, որովհետեւ անոնք, որ չար են՝ չեն կրնար ուրիշին բարիք գործել:

Շարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԴԵԻՒԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ՈԳԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Պայծառակերպութեան լերան վերայ, երբ Մովսէսն ու Եղիան Յիսուս Քրիստոսի յայտնուեցան, խօսեցան անոր այս աշխարհէն ելքի մասին: Բայց այն ոգիները, որ մեռելահարցուկները կը կանչեն, առաջին հերթին իրենք զիրենք կը ներկայացնեն իբրեւ վերոյիշեալ մարդոց ոգիները:

Պէտք է խոստովանիլ, որ ոգեհմայուցեան զբաղողներուն շնորհիւ շատեր սկսան հաւատալ անդրշիրիմեան կեանքի գոյութեան: Սակայն հաւատացեալը անդրշիրիմեան կեանքի գոյութեան մասին նման ապացոյցներու պէտք չունի: Անոր համոզուած պէտք է ըլլանք՝ Սուրբ Գիրքի շնորհիւ: Անշուշտ Աստուած հոգիները արթնցնելու համար զանազան միջոցներ կրնայ կիրարկել: Իսկ մենք պէտք է վարուինք այնպէս, ինչպէս կը թելադրէ Սուրբ Գիրքը. «Երբ մտնես այն երկիրը, որ քու Տէր Աստուածդ քեզի կու տայ... Ձեր մէջ թող չգտնուի ոեւէ մեռելահմայ, որովհետեւ այսպիսի բաներ ընողը Տիրոջ աչքին գարշելի է» (Բ. Օրէնք 18.11-12):

Այստեղ չըսուիր, որ ատով զբաղողը վախով ու սարսափով կը համակուի: Այլ գրուած է, թէ՛ ով որ ատով կը զբաղի՝ գարշելի է:

Շարունակելի



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119.105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 19 ՓԵՏՐՈՒԱՐ, 2012

ԹԻՒ 8

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏՁԷՈՍԻ 6.1-8

Ա. ԲԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

Ձգո՛յ՛, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկայութեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատրութիւն պիտի չստանաք ձեր երկնատը Հօրմէն:

Երբ ողորմութիւն կ'ուզես տալ՝ փող ու թմբուկով մի՛ ընէր, մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծաւորները կ'ընեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ՛ գովասանք ընդունելու ակնկալութեամբ: Վստահ եղէ՛ք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, դուն երբ ողորմութիւն պիտի տաս, ձախ ձեռքդ թող չգիտնայ թէ ինչ կ'ընէ աջ ձեռքդ: Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի ըրած կ'ըլլաս, եւ քու երկնատը Հայրդ որ անտեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծաւորներուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնը աղօթել, որպէսզի մարդիկ իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէ՛ք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Այլ երբ պիտի աղօթես, մտի՛ր սենեակդ, զոցէ՛ դուռդ եւ աղօթէ՛ քու երկնատը Հօրդ, որ անտեսանելի է. եւ Հայրդ որ կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հատուցէ յայտնապէս: Տակաւին, երբ կ'աղօթես, մի՛ շատախօսեր հեթանոսներուն նման, որոնք կը կարծեն որ եթէ երկար աղօթեն՝ Աստուած պիտի լսէ զիրենք: Արդ, մի՛ նմանիր անոնց, որովհետեւ ձեր Հայրը զիտէ ինչ որ պէտք է ձեզի, նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք:

Ուրեմն այսպէ՛ս աղօթեցէ՛ք. «Հայր մեր երկնատը, սրբաբանուի՛ անունդ. թող զայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկիւնքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր էս տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեան մէջ իյնանք. այլ մեզ չարէն ազատէ: Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն»: Եթէ մարդոց ներք իրենց յանցանքները, ձեր երկնատը Հայրն ալ պիտի ներէ՛ ձեզի: Իսկ եթէ մարդոց չենք իրենց յանցանքները, ձեր երկնատը Հայրն ալ պիտի չներէ՛ ձեր յանցանքները:

ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ

Բարեկենդան կը նշանակէ բարի կենդանութիւն, խրախճանք, ճոխ եւ առատ ուտելիքներով վայելելու օր:

Գլխաւոր շարժապահերու նախորդ Շաբաթ օրը կը կոչուի բարեկենդան եւ այդ առիթով կը թոյլատրուի աւելի ճոխ ուտել: Եկեղեցական օրացոյցի մէջ յաճախ կը հանդիպինք բարեկենդանի յիշատակութեան, որովհետեւ կարեւոր պահերը ունին իրենց բարեկենդանը:

Բայց բարեկենդաններուն մէջ յատկանշական է Մեծ Պահքի նախընթաց Կիրակի օրը, որ կը կոչուի **ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ**:

Բուն Բարեկենդանի օրը կը պատրաստեն ճոխ սեղան, կը կատարեն դիմակաւոր խաղեր, խրախճանքներ եւ այլն:

Վանքերու մէջ նոյնիսկ Բուն Բարեկենդանի օրը որոշ ազատութիւն կը տրուէր եւ այդ օրը ժամանակին կը կոչուէր **ԱԲՆՂԱԹՈՂ**:

Բուն Բարեկենդանի նախորդ օրը՝ Շաբաթ երեկոյեան ժամերգութեան ընթացքին, եկեղեցոյ խորանի վարագոյրը կը գոցուի, եւ նոյն օրը կը սկսի արդէն ապաշխարութեան շրջանը: Հոգեւոր արարողութիւնները կը մեղմանան, Ս. Պատարագը կը մատուցուի վարագուրուած խորանին ետեւը: Այսպիսով կը սկսի քառասորեայ ապաշխարութիւնը եկեղեցոյ մէջ:

Եկեղեցոյ անուանակոչութեան եւ կամ կարեւոր սուրբերու տօներու առիթով երբ կը մատուցուի հանդիսաւոր Սուրբ Պատարագ, վարագոյրը կը բացուի եւ տեղի կ'ունենայ բաց պատարագ:

Բուն Բարեկենդանի շարականները կը պատմեն, թէ ինչպէ՞ս ստեղծուեցաւ մարդը եւ ապրեցաւ դրախտի փափկութեան մէջ: Այնտեղ դրախտի մէջ մարդը «ցնծայր գուարճացեալ անտիրական խնդութեամբ», որովհետեւ միշտ կը տեսնէր Աստուծոյ: Բուն Բարեկենդանի շարականներու առանցքը «Դրախտի փափկութիւնը», «Դրախտի գուարճութիւնը» եւ նախատիպ մարդու՝ Ադամի երջանիկ վիճակը կը կազմէ: Քրիստոսը կը յիշատակուի որպէս երկրորդ Ադամ, որ իր միջոցով մարդոց արժանի դարձուց «Դրախտի փափկութեան»:

Բուն Բարեկենդանի շարականները նոյն օրը գուարճացնող մարդոց կը յիշեցնեն նաեւ Դրախտի հոգեւոր երջանկութիւնը եւ ուրախութիւնը:

ԱՌԱԿՆԵՐ

Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է, խելացի են բոլոր անոնք, որոնք այդ իմաստութեամբ կ'ապրին իսկ զգօնութեան սկիզբը՝ բարեպաշտութիւնն է Աստուծոյ հանդէպ, բայց ամբարիշտները կ'անարգեն իմաստութիւնն ու խրատը: (Մովսէս 1 : 7)

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՈՒՐԴՆԵՐԸ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է ձեռնադրութիւնը:

Աւետարանը քարոզելու եւ խորհուրդները կատարելու համար յատկապէս պատրաստուած անձերուն՝ այդ աստուածային պաշտօնին նուիրման խորհուրդն է, որ կը կատարուի շատ ազդեցիկ արարողութեամբ մը:

Ձեռնադրութեան տեղ կ'ըսուի նաեւ կարգ Քահանայութեան կամ Խորհուրդ Կարգ. որովհետեւ Եկեղեցոյ մէջ քահանայութեան աստիճանն է որ իրաւունք կու տայ ընծայալին կատարել խորհուրդները:

Անոնք որ ձեռնադրուելով կ'ուզեն աստուածային պաշտօնի նուիրուիլ, պէտք է լրացնեն հետեւեալ պայմանները.

ա. Չափահասութիւն, ինչպէս նաեւ մարմնական, մտաւորական եւ հոգեկան անթերի վիճակ:

բ.- Խնամուած պատրաստութիւն՝ մտաւորական եւ հոգեկան:

գ.- Նուիրումի եւ ծառայութեան ոգի:

դ.- Յարմարութիւն եւ արժանաւորութիւն աստուածային պաշտօնին:

ե.- Անձնական կամ խղճմտանքի վկայութիւն իր արժանաւորութեան մասին եւ վկայութիւն Եկեղեցոյ (ժողովուրդի) կողմէն:

Ո՞վ կը կատարէ ձեռնադրութիւնը:

Ձեռնադրութիւնը կը կատարէ եպիսկոպոսը: Իսկ ձեռնադրութիւնը կը նուիրագործուի օծումով:

Ամփոփ կերպով խօսիլ, թէ ի՞նչպէս կարգադրուած է ձեռնադրութեան արարողութիւնը մեր եկեղեցոյ մէջ:

Շարունակելի

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԱՐՏԱՔԻՆ ԵՐԵՒՈՅԹԸ ԿԱՐԵՒՈՐ ԶԷ՝ ԱՅԼ ՀՈԳԻԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

- 1.- Բայց Տէրը Սամուէլին ըսաւ. «Անոր երեւոյթին ու հասակին երկայնութեան մի՛ նայիր, քանզի ես քանակի անարգեցի, որովհետեւ Աստուած մարդուն նման չի նայիր. քանզի մարդը երեւցածին կը նայի, բայց տէրը սրտին կը նայի»: (Ա. Թագաւորաց 16.7)
- 2.- Վայելչութիւնը սուտ է ու գեղեցկութիւնը ունայն է, սակայն Տիրոջմէ վախցող կիներ պիտի գովուի: (Առ. 31.30):
- 3.- Ձեր զարդը արտաքին թող ըլլայ, ո՛չ մազերուն յարդարանքը, ո՛չ ոսկեղէնները եւ ո՛չ ալ զարդարուն հագուստները, այլ՝ սրտին մէջ ծածկուած, հեզ եւ խաղաղ հոգիի մը անկորնչելի գեղեցկութիւնը. եւ ա՛յդ է թանկագինը Աստուծոյ համար (Ա. Պետրոս 3.3-4):
- 4.- Որքան ատեն որ հողեղէն այս մարմինին մէջն ենք՝ կը հառաչենք, կարծես բերան մը տակ ճնշուած. ո՛չ թէ որովհետեւ կ'ուզենք այս մարմինը մեր վրայէն հանել, այլ կ'ուզենք երկնայինը ասոր վրայ հագնիլ, որպէսզի այս մահկանացու մարմինը սուզուի կեանքին մէջ: Աստուած ինքն է որ մեզ այս փոխակերպումին կը պատրաստէ, եւ որպէս գրաւական տուած է իր հոգին:

Միասնաբար կարդանք Աստուածաշունչը

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
58.1-14**

Այսպես կ'ըսէ Տէրը.-

«Ուժգին եւ անկաշկանդ պոռա՛, փողի նման ձայնդ բարձրացուր եւ իմ ժողովուրդիս պատմէ իր մեղքերը: Յակորի սերունդին պատմէ իր անօրէնութիւնները:

Ամէն օր զիս կը փնտոեն, կ'ուզեն իմ նանապարհներս նանչնայ. կարծես արդարութիւն գործած ժողովուրդ մը ըլլային, կարծես իրենց Աստուծոյն պատուիրաններէն երբեք դուրս ելած չըլլային:

Եւ հիմա եկեր արդարութիւն եւ իրաւունք կը փնտոեն բոլս, եւ կ'ուզեն Աստուծոյ մօտենալ:

Կը հարցնեն.- «Ծով բռնեցիմք, ինչո՞ւ նկատի չառիր. մենք մեզ նեղեցիմք, ինչո՞ւ չլսեցիր մեզ»:

Որովհետեւ,- կ'ըսէ Տէրը.- Ծով բռնած ատեն դուք ձեր գիտցածը կ'ընէք դարձեալ. ձեր աշխատաւորները կը հարբստահարէք, ձեր հակառակութիւններն ու կոխները կը շարունակէք եւ խեղճներն ու աղփատները կը տանջէք:

Այսպիսի ծովապահուծութիւն պէտք չէ ինծի. այսպիսով ձեր ձայնը ինծի չի հասնիր:

Միթէ այսպիսի՞ ծով ուզեցի.

պահանջեցի՞ որ մարդս ինքզինքը չարչրկէ, կամ՞ գլուխը խոնարհեցնէ, ինչպէս եղէզը հովին դիմաց, կամ՞ բուրձի եւ մոխիրի վրայ պառկի:

Ա՞յս է բու ծովապահուծութիւն կոչածդ եւ Տիրոջ համար ընդունելի ծովապահութեան օրը:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ՀՈՌՎԱՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ
13.11- -14.23**

Սիրոյ այս սկզբունքով ընթացէ՛ք, գիտնալով թէ իՆչ ժամանակի մէջ կ'ապրինք: Ժամանակս է որ քունէն արթնանք, որովհետեւ հիմա փրկութիւնը աւելի մօտ է մեզի քան այն ատեն՝ երբ հաւատացինք: Գիշերը ահա կ'անցնի եւ ցերեկը մօտ է: Ուստի խաւարի գործերէն հեռանանք եւ լոյսի զէնքերը առնենք՝ ապրելու համար այնպէս ինչպէս վայել է լոյսի մէջ քալողներուն, փոխանակ անառակութեամբ, արբեցութեամբ, խառնակեցութեամբ ու պղծութեամբ, կամ նախանձով ու հակառակութեամբ ապրելու: Տէր Յիսուս Զրիստոսի նմանեցէք եւ մարմնի ցանկութիւնները կատարելու հետամուտ մի՛ ըլլաք:

Հաւատքի մէջ տկարացած մէկը ընդունեցէ՛ք առանց իր խիղճը տանջող կասկածները քննադատելու: Օրինակ, մէկը կը հաւատայ թէ կուռքերու զոհած միսէն կարելի է ուտել: Ուրիշ մը, որ կասկած ունի այդ մասին, բանջարեղէն կ'ուտէ միայն: Միս ուտողը թող չարհամարիտ չուտողը, իսկ չուտողը թող չքննադատէ ուտողը, որովհետեւ Աստուած զայն ընդունել է: Ո՞վ ես դուն որ Աստուծոյ ծառան կը դատես: Տէրը ինք միայն գիտէ՝ իր հաւատքին մէջ կանգո՞ւն է անիկա, թէ ինկած: Բայց վստահ եղէ՛ք որ կանգուն պիտի մնայ, որովհետեւ Տէրը կրնայ զայն կանգուն պահել: